

Մեր երկրին չորս կողմը դղումներ կապելու է, որ կարողանայ ջուրին երեսը մնալ, օտարներու ծիծաղէն խալսիլ եւ ապրիլ իւր պարունակած այլ եւ այլ ժողովուրդներով...:

2 Յուլիս

Մայրաքաղաքիս մէջ ամեն օր գողութեան դէպքեր կը պատահին: Երէկ յոյն մը եւ ոստիկան մը աճապարանօք ոստիկանութեան դռնէն ներս կը մտնէին:

Խուռն բազմութիւն մը կեցած էր դրան առջեւ. ամեն մարդ գիտէր, թէ գողութեան դէպք մը տեղի ունեցած էր, բայց ոչ ոք գիտէր, թէ ոստիկանն ձերբակալած էր յոյնն թէ յոյնը ձերբակալած էր ոստիկանը:

Այսօր ստուգուեցաւ, որ գողութեան հեղինակն ոստիկանն է եղեր... ի՛նչ փոփոխութիւն... աստէն մը ոստիկանները կը ձերբակալէին գողերը, իսկ այժմ գողեր կը ձերբակալեն ոստիկանները:

3 Յուլիս

Քիւրդերու պաշտօնական լրագիր *Թէրճէմանը հաքիքաթ*, որ իւր քաղաքական տասնեւվեց բունթօ յօդուածներով մեծ ծառայութիւն կը մատուցանէ քիւրդերու՝ կը յայտնէ թէ Հայաստանի մէջ ըլլալիք Բարենորոգումներն մեծ յուզում պատճառած են քիւրդերու եւ թէ կառավարութիւնը հեռագրով անոնց սիրտը հանդարտեցուցած է:

Ապագայ Բարենորոգումներու զրոյցն եթէ այսչափ յուզում պատճառէ՝ եթէ Բարենորոգումները գործադրուիլ սկսին՝ ո՞րչափ յուզում պիտի պատճառեն արդեօք:

Թէրճէման քաշած հեռագրին պատճէնը չհրատարակեր, որ մենք ալ կարդայինք, բայց հաւանականաբար հետեւեալն ըլլալու է.

«Քիւրդեր, հանգիստ եղէք. ազատ էք, ինչպէս եւ երբ որ ուզէք՝ Հայերու ստացուածքն, կեանքն եւ պատիւը բռնաբարելու. Բարենորոգում չպիտի ըլլայ հոս. եթէ երբեմն երբեմն մեր բերնէն *բարենորոգում* բառը լսէք՝ մի հաւատաք. Եւրոպան խաբելու համար կը գործածենք զայն: Դուք ձեր գործին նայեցէք եւ բնաւ հոգ մի ընէք. օսմանեան բարեխնամ կառավարութիւնը զձեզ չգրկեր եւ ոչ մէկ բանէ մը»:

Այս իմաստով հեռագիր մը միայն կարող է քիւրդերը հանդարտեցնել: